
ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ ՊՍՏՃԱՆՈՍԾ ԼԵԶՎԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ, ՀԵՆՐԻԵՏԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Եղեռնի հետևանքով հայ ժողովուրդը կրեց մարդկային, իրեղեն և հոգևոր կորուստներ:

Հոգևոր կորուստները մշակութային էին, հոգեբանական, բարոյական, քաղաքական, իրավական, կրոնական, լեզվական:

Առանձնացնելով լեզվական կորուստները՝ թվարկենք դրանց առավել էական դրսևորումները:

1. Լեզուն գոյություն ունի, կենդանի է, եթե կա նրանով խոսող ու գրող լեզվական հանրություն՝ մարդկային զանգված: Եղեռնի հետևանքով հայախոս զանգվածը ավելի քան կիսով չափ կրճատվեց և մասնատվեց: Այդ զանգվածի ցրիվ եկած մասը բեկորները օտար միջավայրում արագորեն լեզվափոխ եղան: Համեմատաբար մեծ ու խոշոր գաղթօջախները մայրենի լեզուն պահեցին ավելի երկար կամ դեռ պահում են: Սակայն աստիճանական լեզվափոխությունն ու ազգային ուժացումը բնորոշ են ամբողջ Սփյուռքին: Աշխարհում այժմ կարող էր լինել 35-40 մլն հայ՝ մեծագույն մասը իր բնօրրանում և հայախոս, մինչդեռ եղեռնի հետևանքով այժմ հաշվվում է 10-12 մլն հայ՝ մեծ մասը ոչ հայախոս և մեծագույն մասը աշխարհասփյուռ:

2. Հատկապես տուժեց արևմտահայերենը, որը զրկվեց իր բնօրրանից (հայրենազրկվեց), դարձավ վտարանդի և աշխարհասփյուռ: Դրա հետևանքով մեծապես վտանգվեց գրական հայերենի այդ ճյուղի հարատևումը: Այսպես, դեռ անցյալ դարի 90-ականներից այն տեղ է գտել «Վտանգված և անհետացող լեզուների եվրոպական կարմիր գրքում»: 2010 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն նույնպես արևմտահայերենը դասեց աշխարհի վտանգված լեզուների շարքին:¹ Արևմտահայերենը վերանալու վրա է ոչ միայն Եվրոպայում, այլև լատինաամերիկյան գաղթավայրերում: Մերձավոր Արևելքի համեմատաբար զանգվածեղ և ավանդապահ գաղթավայրերը (Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Իրաք) եղեռնի են ենթարկվում նորագույն ժամանակներում մեր աչքի առաջ, հատկապես Արևմուտքի հրահրած «Արաբական գարուն» հորջորջված ահաբեկչական շարժման հետևանքով: Արևմտահայերենը, որքանով էլ որ գոյատևեց, սակայն չունեցավ պահպանման ու զարգացման այն բարենպաստ պայմանները, ինչ, օրինակ, արևելահայերենը: Արևմտահայերե-

¹ Տե՛ս <http://hayernaysor.am/archives/date/2015/11/18> կամ <http://www.lezu.am/?p=373>

նը գնալով տարածվող խառնամուսնությունների հետևանքով դուրս է մղվում նաև ներընտանեկան գործածությունից: Ամեն մի գաղթավայրում արևմտահայերենը ենթարկվում է տիրապետող լեզվի (անգլերենի, ֆրանսերենի, իսպաներենի, իտալերենի, հունարենի, գերմաներենի, թուրքերենի կամ արաբերենի) ազդեցությանը: Վերջին երկու տասնամյակում արևելահայերի զանգվածային արտագաղթի հետևանքով արևմտահայերենը սկսել է մեծապես ենթարկվել նաև արևելահայերենի ազդեցությանը: Միյուրքում հետզհետե բազմանում են արևելահայերենի ուսուցմամբ դպրոցները՝ երբեմն ի հաշիվ արևմտահայերենի: Այս անցումը մասամբ տեղի է ունենում նաև որոշ ակումբներում, եկեղեցիներում, զանգվածային լրատվամիջոցներում:

Արևմտահայերենը վտանգված լեզու պետք է հայտարարել նաև Արևելյան Հայաստանում: Թեև տարբեր ժամանակներում այստեղ (Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև Իրանում և այլուր) բնակություն են հաստատել մեծ քանակով արևմտահայ գաղթականներ, սփյուռքահայ հայրենադարձներ, սակայն դրանց սերունդներն այժմ գրեթե չեն տիրապետում արևմտահայերենին: Իսկ դրան տիրապետող սերունդներից միայն փոքրաթիվ ծերունիներ են մնացել: Հայաստանում բավարար չեն արևմտահայերենի վերարտադրման պայմաններն ու մեխանիզմները: Այդ պատճառով Հայաստան ներգաղթած սիրիահայերը ևս չեն կարող իրավիճակը փոխել: Մինչդեռ դա կարևոր է նրանց այստեղ հարմարվելու և մշտաբնակ դառնալու համար: Ուստի անհրաժեշտ է օրենսդրական, կրթական, մշակութային և բարոյաժողովրդական դաշտ ստեղծել արևմտահայերենը Հայաստանում թեկուզ կղզյակների ձևով պահպանելու և վերարտադրելու նպատակով:

3. Մեծ եղեռնի հետևանքով բնաջնջվեց արևմտյան բարբառների մոտ 30 %-ը (Եվրոկիայի, Ամասիայի, Օրդուի, Տրապիզոնի, Շապին-Պարահիսարի, Ակնի, Խոտորջուրի, Տիգրանակերտի և այլն), մյուսները (Վանի, Մեքաստիայի, Մալաթիայի, Արաբկիրի, Ջեյթունի, Մարաշի, Խարբերդի, Երզնկայի, Եղեսիայի, Շատախի, Ոզնի և այլն) տեղահան եղան, վտանգվեցին և սկսեցին կամաց-կամաց մեռնել: Բնօրրանում մասամբ պահպանվեցին միայն Քեսաբի, Պոլսի և Համշենի բարբառները: Վերջինս, սակայն, տնտեսական, քաղաքական ու մշակութային շարունակական ճնշումների հետևանքով վերացման շեմին է: Արևելյան Հայաստանում առ այսօր քիչ թե շատ պահպանվում են Սասունի, Մշո, Կարնո բարբառները՝ շնորհիվ դրանցով խոսող առանձին համայնքների գոյության:

4. Հայերի ցեղասպանության հետևանքով անհետացան մեծաքանակ հայալեզու բնահյուսական արժեքներ, որ մինչ այդ չէր հաջողվել գրի առնել կամ ձայնագրել: Եղեռնից մազապուրծ սփյուռքահայերը փորձեցին այդ արժեքներից այն, ինչ իրենք դեռ հիշում էին, գրանցել ու հրապարակել հայրենակցական տարբեր միությունների պատրաստած

ժողովածուներում՝ նվիրված իրենց կորուսյալ բնօրրաններին²: Բայց դրանք չնչին քանակ են անվերադարձ կորցրած արժեքների համեմատ:

5. Հենց եղեռնի տարիներին ոչնչացան հայալեզու բյուրավոր հուշարձաններ՝ վիմագիր և թղթագիր արձանագրություններ, հանրային ու անձնական գրադարաններ, եկեղեցիներում ու գրադարաններում պահվող ձեռագիր մատյաններ ու հնատիպ գրքեր, եկեղեցական, կուսակցական, կրթական, լրատվական և այլ կազմակերպությունների արխիվներ, գրողների ու գիտնականների անտիպ երկեր ու անձնական արխիվներ: Վիմագիր արձանագրությունների ոչնչացումը մեր պատմական հայրենիքում շարունակվում է մինչև այսօր: Խոսքը վերաբերում է ոչ միայն Թուրքիայի, այլև Ադրբեջանի և նույնիսկ Վրաստանի տարածքների հայկական հուշարձաններին³: Նախքան ցեղասպանությունը տասնյակ հազարավոր հայկական ձեռագրեր են պահվել Օսմանյան կայսրության տարածքի հայկական վանքերում ու եկեղեցիներում, գրադարաններում, անհատ մարդկանց մոտ: Կոտորածների և տեղահանության ժամանակ իրենց բնակավայրերից հեռացող հայերը հաճախ առաջին անհրաժեշտության իրերի փոխարեն իրենց հետ վերցրել են ձեռագիր մատյաններ: Շատ ձեռագրեր պահվել են թաքստոցներում: Այնուամենայնիվ, դրանց մեծ մասը ոչնչացվել է: Ոչնչացված ձեռագիր մատյանների ստույգ թիվը հայտնի չէ: Կան մասնակի հաշվումներ: Այսպես, հայտնի է, որ Վասպուրականում ոչնչացվել է շուրջ 3000 ձե-

² Տե՛ս, օրինակ, **Երուսաղեմի Տեր Սկրտիչեան**, Գանձեր Վասպուրականի, Ա. հատոր, Պոսթոն, 1966, 640 էջ: **Յովակիմ Յովակիմեան (Արշակունի)**, Պատմություն Հայկական Պոնտոսի, Պեյրույթ, 1967, 951 էջ: **Պետրոս Մինասեան**, Պատմագիրք Կիլիկիի, Պեյրույթ, 1974, 823 էջ: **Առաքել Պատրիկ**, Պատմագիրք յուշամատեն Սեբաստիոյ և գաւառի հայրութեան, Ա. հատոր, Պեյրույթ, 1974, 880 էջ, Բ. հատոր, Նիւ Ճըրզի, 1983, 686 էջ: **Սարգիս Բախտիկեան**, Արաբկիր և շրջակայի գիւղերը. պատմական-ազգագրական համառոտ տեսութիւն, Պեյրույթ, 1934, 159 էջ: **Արշակ Ալպոյաճեան**, Պատմություն Մալաթիոյ հայոց. տեղագրական, պատմական և ազգագրական, Պեյրույթ, 1961, 1536 էջ: **Գրիգոր Յ. Մխալեան**, Պարտիզակն ու պարտիզակցին, Գահիրէ, 1938, 984 էջ: **Գուրզէն Տեր Վարդանեան**, Երզնկա-Կամախ գաւառաբարբառը և ազգագրական յուշեր, Երուսաղեմ, 1968, 315 էջ: **Յարութիւն քինյ. Մարգիսեան (Ակտր)**, Բալու և իր սովորութիւնները, կրթական ու իմացական վիճակը և բարբառը, Գահիրէ, 1932, 568 էջ: **Եղիազար Կարապետյան**, Սասուն. ազգագրական նյութեր, Երևան, 1962, 203 էջ: **Թորոս Մ. Մատաղճեան** և **Հրանդ Գանգրունի**, Յուշամատեն Թումարգայի, Պեյրույթ, 1959, 629 էջ: **Միսաք Միսեռեան (Մ. Ուլնեցի)**, Պատմություն Ջեյթունի (1409-1921), Պեյրույթ, 1996, 10+694 էջ: **Յ. Պ. Պողոսեան**, Հաճընի ընդհանուր պատմությունը և շրջակայ Գօզան-Տաղի հայ գիւղերը, Լոս Անճելըս, 1942, 857 էջ: (Համանման հրատարակությունների մատենագիտությունը տե՛ս <http://www.houshamadyan.org/arm/themes/bibliography.html>):

³ Այս մասին տե՛ս, օրինակ, «Եղեռն եղեռնից հետո», ֆիլմ (<https://www.youtube.com/watch?v=fVB8paQM1gE>), «Ջուղա», ֆիլմ (<https://www.youtube.com/watch?v=o-EjufJZVtg>), «Մի օր Կախեթում», ֆիլմ (<https://www.youtube.com/watch?v=rZHORMUKDog>), «Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների վիճակը 1915 թ.-ից ի վեր», «Վարձք» հանդես, № 2, Եր., 2010, էջ 2-64, «Հայկական պատմական հուշարձանների վիճակը Ադրբեջանի Հանրապետությունում», «Վարձք» հանդես, № 3, Եր., 2011, էջ 2-64, **Մ. Կարապետյան**, Օսմանյան կայսրության «անմեղ» հրդեհները, «Վարձք» հանդես, № 5, Եր., 2012, էջ 11-14, **Մ. Կարապետյան**, Ազուլիսի երկրորդ եղեռնը, «Վարձք» հանդես, № 7, Եր., 2012, էջ 22-27, «Հին Ջուղա. ոչնչացման ժամանակագրություն» (<http://www.mfa.am/hy/jugh>):

ռագիր մատյան, Տարոնում՝ շուրջ 2000, Կեսարիայում և շրջակայքում՝ 700, Անկարայում և շրջակայքում՝ ավելի քան 300, Արմաշում՝ շուրջ 250, Սեբաստիայում և շրջակայքում՝ շուրջ 170 և այլն⁴: Դրանք մեծ մասամբ եղել են կրոնական բովանդակության մատյաններ (Ավետարան, Շարակնոց, Հայսմավուրք, Ճաշոց, Ժամագիրք, Ճառընտիր, Նարեկ և այլն), ինչպես նաև պատմագիտական, իմաստասիրական, բնագիտական, գեղարվեստական երկեր ու ժողովածուներ:

6. Եղեռնի տարիներին զոհվեցին հայախոս ու հայագիր մեծաթիվ ասացողներ, գուսաններ, ասմունքողներ, դերասաններ, երգիչներ, բանաստեղծներ, գրողներ, լրագրողներ, գիտնականներ, մանկավարժներ, հրապարակախոսներ, հասարակական գործիչներ, հռետորներ, քարոզիչներ, հոգևորականներ: Դժվար է նույնիսկ ճշտել նրանց թիվը: Իսկ ովքեր փրկվեցին եղեռնից, մեծ մասամբ այլևս չունեցան հայերենով աշխատելու և ստեղծագործելու առիթ ու հնարավորություն: Դա վերաբերում է անգամ Արևելյան Հայաստանում ապաստան գտածներին, որոնց զգալի մասը զբաղվեց ոչ մտավոր աշխատանքով, իսկ մի մասը դարձավ ստալինյան բռնությունների զոհ: Համացանցում առկա է տեղեկություն, որ եղեռնի զոհ է դարձել 4000 հոգևորական⁵: Սա, իհարկե, մոտավոր թիվ է և նույնիսկ քիչ է թվում, քանի որ հոգևորականները առաջնահերթ էին ոչնչացվում: Անվանապես հաճախ են հիշվում 1915-ի ապրիլի 24-ին ու հաջորդ մի քանի օրերին Կոստանդնուպոլսում ձերբակալված շուրջ 800 մտավորականների⁶ թվում եղած մի քանի ակադեմիկոս հայ գրողներ ու բանաստեղծներ (Գրիգոր Ջոհրայ, Դանիել Վարուժան, Սիամանթո, Ռուբեն Զարդարյան, Ռուբեն Սևակ, Արտաշես Հարությունյան, Թլկատինցի, Երուխան, Տիգրան Զյոլյուրյան, Գեղամ Բարսեղյան, Սմբատ Բյուրատ, Մելքոն Կյուրճյան [Հրանդ]), հրապարակախոսներ ու խմբագիրներ (Նազարեթ Տադավարյան, Տիրան Քելեկյան, Գագիկ Օզանյան և ուրիշներ): Իսկ եղեռնի զոհ դարձած մտավորականների իրական թիվը դեռ անհայտ է և հավանաբար պետք է հաշվվի տասնյակ հազարներով: Եղեռնի զոհերի շարքում մեծ պետք է լինի հատկապես մանկավարժների թիվը, քանի որ կոտորածներ սկսելու գաղտնի հրահանգներով պահանջվել է նախ և առաջ կոտորել հայկական դպրոցների ուսուցիչներին⁷:

7. Եղեռնի հետևանքով վերացան հազարավոր հայկական դպրոցներ: Մինչդեռ հայտնի է, թե Արևմտյան Հայաստանի անգամ ոչ մեծ բնակավայրերում ինչ բարձրակարգ կրթարաններ կային, որոնք պատրաստում էին Մեծարենցի, Վարուժանի նման խոսքի վարպետներ: Այժմ

⁴ Տե՛ս «Հայկական հարց» հանրագիտարան, Եր., 1996, էջ 12-13:

⁵ Տե՛ս <http://holytrinity.am/posts/view/920>

⁶ Տե՛ս «Հայկական համառոտ հանրագիտարան», հ. 3, Եր., 1999, էջ 661-666:

⁷ Տե՛ս «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Եր., 1991:

Թուրքիայում գործում են հայկական ընդամենը 18 դպրոցներ (հիմնականում Պոլսում), որոնցում ուսանում են շուրջ 3000 աշակերտներ⁸:

8. Եղեռնի հետևանքով Թուրքիայի տարածքում դադարեցին լույս տեսնել հայալեզու բազմաթիվ թերթեր, հանդեսներ, տարեգրքեր, վերացան բազմաթիվ վանքեր, գործող եկեղեցիներ, տպարաններ, թատրոններ, մշակութային կենտրոններ, ակումբներ: Վերացավ բեղմնավոր ու արդյունավետ մի հսկայածավալ լեզվական միջավայր, որից միայն պատահիկներ ու ծվեններ մնացին Սփյուռքում: 1914 թ. Թուրքիայի տարածքում հայկական գործող եկեղեցիների ու վանքերի թիվը եղել է ավելի քան 2500: ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով 1923 թ. դրանցից մնացել էր 913 կառույց, իսկ 1974-ին՝ ընդամենը 449-ը, որոնցից 252-ը՝ ավերակ, 197-ը՝ հիմնանորոգման կարիք ունեցող⁹: Այժմ Թուրքիայի տարածքում հաշվվում է ընդամենը 34 հայկական գործող եկեղեցի¹⁰:

9. Լեզվական կորուստները ոչ միայն հետևանք էին ժողովրդի բնաջնջման ու տեղահանության, այլև Օսմանյան Թուրքիայում ծրագրված և իրականացված **լեզվասպանության**: Խնդիրն այն է, որ 1915 թ. Թուրքիայի կառավարությունը հրապարակեց հրամանագիր, որով արգելվեց հրապարակավ հայոց լեզուն գործածելը Արևմտյան Հայաստանի տարածքում¹¹: Այդ պատճառով ցեղասպանությունից դավանափոխությամբ փրկվածներն անգամ ստիպված եղան լեզվափոխ ու ազգափոխ լինել: Մեկ այլ հրամանագրով արգելվեց տեղահանված հայերի վերադարձը իրենց բնօրրան¹²: 1923թ. սեպտեմբերին ընդունվեց թուրքական նոր օրենք, ըստ որի՝ մեկընդմիջտ արգելվեց հայերի՝ մշտական բնակություն հաստատելը Արևմտյան Հայաստանում¹³: Դրանով իսկ բացառվեց հայախոս զանգվածի վերականգնումը մեր պատմական հայրենիքի մեծ մասում:

Թուրքիայի կառավարությունը արդեն ավելի քան հարյուր տարի է՝ համակարգված ու հետևողականորեն անվանափոխում-թրքացնում է հայկական տեղանունները՝ շարունակելով ավելի վաղ սկսված տարերային գործընթացը: Մա նույնպես պետականորեն ծրագրված լեզվասպանության դրսևորում է: Այդ ծրագիրը հատկապես մեծ թափ է առել 1916 թ. հունվարի 5-ին ռազմական նախարար Էնվերի ստորագրած հրամանագրով¹⁴: 1957 թ. Թուրքիայի Հանրապետությունում ստեղծվեց տեղանունների փոփոխության հատուկ հանձնաժողով՝ «Անվանա-

⁸ Տե՛ս <http://www.armweeklynews.am/w/wp/p183.php>

⁹ Տե՛ս «Հայկական հարց» հանրագիտարան, էջ 14:

¹⁰ Տե՛ս <http://www.armweeklynews.am/w/wp/p183.php>

¹¹ Տե՛ս <http://armarlur.com/?p=59622>

¹² Տե՛ս **Ա. Անտոնյան**, Մեծ ոճիրը, Եր., 1990, էջ 35-37:

¹³ Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/Մասնակից:Liana-Lili2014/Ավագարկյ>

¹⁴ Հանգամանորեն տե՛ս **Լ. Սահակյան**, Հայկական տեղանունների թուրքացման քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում, «Վեմ» հանդես, 2010 թ., հվ. 1, էջ 83-96, կամ http://www.ararat-center.org/upload/files/Toponymy_Lusine.pdf

փոխման մասնագիտական կազմակերպություն» անունով¹⁵, որը շարունակեց գործել Էնվերյան հրամանագրի ոգով: Ըստ Զորյան հաստատության (ԱՄՆ) տվյալների՝ Արևմտյան Հայաստանի տեղանունների ավելի քան 90 %-ը թրքացվել է¹⁶: Այդ թիվը կազմում է ավելի քան 30 հազար¹⁷: Այդպիսով Թուրքիան բնաջնջում է հայկական հետքը գրավյալ տարածքներից և ամրապնդում այն, ինչին հասել է ցեղասպանության միջոցով:

Խոսեցինք Մեծ եղեռնի հետևանքով արևմտահայերենի կորուստների մասին: Սակայն չմոռանանք, որ արևելահայերենը ևս զգալի կորուստներ է ունեցել Ադրբեջանի թուրքերի և Ադրբեջան պետության իրականացրած կոտորածների, տեղահանությունների, մշակութասպանության հետևանքով: Հայոց լեզուն մեծ կորուստներ է կրել նաև Վրաստանի տարածքում: Բայց սրանք առանձին քննարկման նյութ են:

Կորուստներին տեղյակ լինելը, անշուշտ, կարևոր է, սակայն ավելի կարևոր է այդ կորուստների փարատումն ու փոխհատուցումը: Թուրքիան կարող է փոխհատուցել միայն տարածք ու նյութական միջոցներ: Հոգևոր կորուստները միայն մենք՝ հայերս կարող ենք փոխհատուցել ու վերականգնել: Բայց սա ևս առանձին քննարկման նյութ է:

Այսպիսով, Օսմանյան Թուրքիայի տարածքում 1894-1923 թթ. տեղի ունեցավ ոչ միայն հայերի պետականորեն ծրագրված ցեղասպանություն, այլև լեզվասպանություն, որը տարբեր դրսևորումներով շարունակվում է մինչև այսօր: Ոչնչացվեցին բազմահազար կրթական ու կրոնական հաստատություններ, թատրոններ, մշակութային կենտրոններ, լրատվամիջոցներ, հրատարակչություններ, տպարաններ, գրադարաններ, միջնադարյան ձեռագիր մատյաններ, կալանավորվեցին ու սպանվեցին հայերենով ստեղծագործողներ, հայերենը ուսուցանողներ, անհետացան մեծաքանակ հայալեզու բանահյուսական արժեքներ, տասնամյակներ շարունակաբար թրքացվում են Արևմտյան Հայաստանի հայկական տեղանունները, անմիջապես կամ աստիճանաբար բնաջնջվեց հայերենի արևմտյան բարբառների մեծագույն մասը, հայրենագրկվեց արևմտահայ գրական լեզուն: Վերացավ բեղմնավոր ու արդյունավետ մի հսկայածավալ հայալեզու միջավայր, որից միայն պատահիկներ ու ծվեններ մնացին Սփյուռքում: Ամեն մի գաղթավայրում արևմտահայերենը ենթարկվում է տվյալ երկրում տիրապետող լեզվի ազդեցությանը: Վերջին երկու տասնամյակում այն սկսել է մեծապես ենթարկվել նաև արևելահայերենի ազդեցությանը: Հետզհետե տարածվող խառնամուսնությունների հետևանքով նա դուրս է մղվում անգամ ներընտանեկան գործածությունից: Այսօր ամբողջ աշխարհում վտանգված լեզու է արևմտահայերենը: Թուրքիայի Հանրապետությունը իր արտաքին քաղաքակա-

¹⁵ Տե՛ս նույն տեղը:

¹⁶ Տե՛ս «Զարթոնք», 15 սեպտեմբերի, 1983:

¹⁷ Տե՛ս <http://armarlur.com/?p=59622>

նությունը և միջազգային ահաբեկչական կառույցների ուժերով փորձում է թուլացնել ու վերացնել Մերձավոր Արևելքի հայկական համայնքները՝ այդպիսով շարունակելով հայերի ցեղասպանությունը:

Բանալի բառեր - լեզվասպանություն, հայոց լեզու, արևմտահայերեն, հայերենի բարբառներ, արձանագրություններ, ձեռագիր մատյաններ, գրողներ, դպրոցներ, լրատվամիջոցներ, եկեղեցիներ, տեղանուններ

ОГАНЕС ЗАКАРЯН, ГЕНРИЕТА СУКИАСЯН – Языковые потери, обусловленные геноцидом армян. – В 1894-1923 гг. на территории Османской Турции произошёл не только Геноцид армянского народа, но и лингвоцид, который по-разному проявляется до сих пор.

Были уничтожены сотни и тысячи учебных и религиозных учреждений, театры, культурные центры, средства массовой информации, издательства, типографии, библиотеки, средневековые манускрипты, были арестованы и убиты писатели, учёные преподаватели, носители и сказители древних фольклорных произведений, отуречены (и до сих пор отуречиваются) исконные топонимы, постепенно исчезла большая часть западных диалектов армянского языка, западноармянский литературный язык потерял исконные территории своего бытования. Разом исчезла плодотворная языковая среда, которая разрозненными клочьями сохранилась только в диаспоре. Западноармянский язык в каждой из общин подвергается влиянию доминирующего в данной стране языка. В последние два десятилетия он начал подвергаться также влиянию восточноармянского языка. В силу многочисленных смешанных браков армянский язык вытесняется даже из семейного обихода. Некогда богатейшему литературному языку западных армян сегодня грозит опасность исчезновения и вымирания. Современная Турция не оставляет попыток ослабить и уничтожить армянские общины Ближнего Востока.

Ключевые слова: лингвоцид, западноармянский язык, диалекты, манускрипты, библиотеки, писатели, школы, СМИ, топонимы

HOVHANNES ZAKARYAN, HENRIETA SUKIASYAN – Language Loss Caused by the Armenian Genocide. – In 1894-1923 on the territory of the Ottoman Empire occurred not only the Armenian Genocide programmed by state but also linguicide still ongoing on different manifestations.

Thousands of Armenian educational and religious institutions, theaters, cultural centers, mass media, publishing and printing houses, libraries, medieval manuscripts were destroyed, writers, poets, teachers of Armenian were arrested and killed, many Armenian folklore works disappeared, Armenian toponyms in Western Armenia were constantly being replaced by Turkish ones, most of the western dialects of Armenian had been wiped out at once or gradually. The Western Armenian had lost homeland. A fruitful and effective Armenian environment was gone, of which only scraps and pieces stayed in the Diaspora. Western Armenian in each colony is influenced by the dominant language of the country. In the past two decades, he began to be influenced also by the Eastern Armenian language. He even forced out of family consumption due to more and more spreading of mixed marriages. Western Armenian now is an endangered language around the world. The Turkish Republic with its foreign policy and by dint of international terrorist organizations is trying to weaken and destroy the Armenian colonies in the Middle East.

Key words: linguicide, the Armenian language, Western Armenian, dialects of Armenian, Armenian manuscripts, libraries, writers, schools, mass media, toponyms